ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 34

<03> 05 2011թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի <<ա>> ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահի գրությունը

<<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի և Մասիսի տարածաշրջանների <<Պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի հունիսի 30-ի N 68 որոշման 66-րդ տողում <<Ճուղուրյան Արմեն>> բառերը փոխարինել <<Ալեքսանյան Գոհար>> բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

CoSign Digital Signature

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 33

«03» 05 2011թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրանագրի 1.6.կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով մարզին հատկացված գումարից 900.0 (Ինն հարյուր) հազար դրամ գումար հատկացնել մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ որպես դրամական օգնություն համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ կատարել համապատասխան վճարումներ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է.Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2011թ. մայիս«03»
N 33 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Արարատի մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվող դրամական օգնությունների

1. Բաբլոյան Ալմարա- 20.0 հազ. դրամ
2. Հովսեփյան Ասյա- 60.0 հազ. դրամ
3. Մարտիրոսյան Միքայել- 80.0 հազ. դրամ
4. Դավթյան Շուշանիկ-10.0 հազ. դրամ
5. Ավետիսյան Անահիտ- 20.0 հազ. դրամ
6. Պետրոսյան Լիլիկ- 20.0 հազ. դրամ
7. Գասպարյան Արտուշ-30.0 հազ. դրամ
8. Սիմոնյան Անդրանիկ-30.0 հազ. դրամ
9. Բաղդասարյան Քնարիկ- 100.0 հազ. դրամ
10. Կարապետյան Մերի -50.0 հազ. դրամ
11. Հովսեփյան Շուշանիկ -80.0 հազ. դրամ
12. Նազարյան Սերյան-50.0 հազ. դրամ
13. Գևորգյան Խաչիկ- 50.0 հազ. դրամ
14. Ասատրյան Վերգուշ - 15.0 հազ. դրամ
15. Մելքոնյան Մարիամ -20.0 հազ.դրամ
16. Սարգսյան Զարուհի-40.0 հազ.դրամ
17. Խաչատրյան Կարեն-30.0 հազ.դրամ
18. Աղաբեկյան Կամո- 35.0 հազ.դրամ
19. Գասպարյան Հայկարամ -100.0 հազ.դրամ
20. Առաքելյան Ավագ-30.0 հազ.դրամ
21. Հակոբյան Կամո -30.0 հազ.դրամ

Ընդամենը՝900.0 հազ. դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 32

«30» «04» 2011թ.

թ. Արտաշատ

ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Քաղաքացիական ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 62-2.3-37/ Հրանտ Առաքելյանին շնորհել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 31

<21> 04 2011թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 1273-Ն որոշմամբ հաստատված << Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգի 50-րդ և 55-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Արարատի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատկացնելու մրցութային հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 26-ի թիվ 7 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Ա. Պողոսյանին՝ սահմանված կարգով ապահովել հաղթող ճանաչված կազմակերպության հետ երթուղու սպասարկման պայմանագրի կնքման գործընթացը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2011թ. ապրիլի 21
թիվ 34 որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

2011թ.ապրիլի 26-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի

Նիստի նախագահ Ա. Մուրադյան

Նիստի քարտուղար Ա. Հակոբյան

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանը, անդամներ Վ. Գրիգորյանը, Ս. Ղարիբյանը, Ա. Արամյանը, Ա. Դավթյանը:

Օրակարգ

2011 թվականի ապրիլի 15-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին- 2011թ. ապրիլի 15-ին անցկացված ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորափոխադրող կազմակերպություններին հատկացնելու մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Զեկուցող- հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մուրադյան

Արտահայտվեցին-Ա. Հակոբյանը, Ա. Պողոսյանը, Վ. Գրիգորյանը

Որոշեցին

1. 2011թ. ապրիլի 15-ին կայացած մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել <<Լիգա>> ՍՊԸ-ին:

N	Երթուղու համարը	Երթուղու անվանումը	Երթուղու տեսակը	Հաղթող ճանաչված կազմակերպության անվանումը	Ավտոմեքենայի անվանումը	Ավտոմեքենայի պետհամարանիշը
1	2	3	4	5	6	7
1	02-013	Արտաշատ-Խոր Վիրապ-Լուսառատ-ՈԿՖ	Միկրոավտոբուսային	<<Լիգա>> ՍՊԸ	ԳԱԶ-32213 ԳԱԶ-32213	27LU077 028UL25

Հիմք մրցութային ամփոփիչ թերթիկ՝ 1 թերթ

2 Մարզպետի հաստատմանը ներկայացնել անցկացված մրցույթի արդյունքները և առաջարկել հաղթող ճանաչված կազմակերպությանը հանձնվող երթուղու սպասարկման ժամկետը սահմանել 3 /երեք/ տարի՝ համաձայն ՀՀ կառավարության 2007 թ. հոկտեմբերի 4-ի N 1273-Ն որոշմամբ հաստատված կարգի 54-րդ կետի 1) ենթակետի:

3 Սահմանված ժամկետում հայտ չստանալու պատճառով 02-010 <<Արտաշատ-Ջրաշեն>> և 02-030 <<Մասիս-Նոր Կյուրին>> երթուղիների մասով մրցույթը համարել չկայացած:

Նախագահ Ա Մուրադյան /ստորագրություն/

Տեղակալ Ա.Պողոսյան /ստորագրություն/

Քարտուղար Ա.Հակոբյան /ստորագրություն/

Անդամներ Վ.Գրիգորյան /ստորագրություն/

Ս.Ղարիբյան /ստորագրություն/

Ա.Արամյան /ստորագրություն/

Ա.Դավթյան /ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 30

«21» «04» 2011թ.

գ. Արտաշատ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության 2011թ. ապրիլի 18-ի ,,Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելուն համաձայնություն տալու մասին,, թիվ 250-Ա որոշումը՝ պաշտոնների անձնագրերում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի՝

1) ղեկավարի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-1.1-1) անձնագրի՝

ա. 11-րդ կետի ,,ե,, ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

,,ե) Օրենքով սահմանված կարգով ապահովում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.,, ,

բ. 11-րդ կետի ,,է,, ենթակետից հանել ,,և կրտսեր,, բառերը,

գ. 11-րդ կետը լրացնել նոր ,,է1,, ,,է2,, ենթակետերով հետևյալ բովանդակությամբ .

,,է1) Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, դիմում ներկայացրած, գործող հավաստագիր ունեցող և տվյալ կրտսեր թափուր պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիներից մեկին առանց մրցույթի նշանակում է քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում.

է2) Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմած և չնշանակված քաղաքացիների ցանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Խորհուրդ.,,.

2) ղեկավարի տեղակալի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-1.2-1) անձնագրի 11-րդ կետի ,,թ,, ենթակետը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

,,թ) Աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ ապահովում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը. ,, .

3) անձնակազմի կառավարման բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-2.2-11) անձնագրի՝

ա. 11-րդ կետի ,,ե,, ենթակետից հանել ,,և կրտսեր,, բառերը .

բ. 11-րդ կետը լրացնել նոր ,,թ1,, և ,,թ2 ,, ենթակետերով հետևյալ բովանդակությամբ .

,,թ1) կազմակերպում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար դիմումների ընդունման աշխատանքները.

թ2) կազմակերպում է քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմած և չնշանակված քաղաքացիների ցանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում Խորհուրդ ներկայացնելու աշխատանքները,,.

4) անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-3.1-12) անձնագրի՝

ա. 11-րդ կետի ,,է,, ենթակետից հանել ,,և կրտսեր ,, բառերը,

բ. 11-րդ կետի ,,թ,, ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

,,թ) քաղաքացիական ծառայության մասին << օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հարցաշարերի հրապարակման աշխատանքները. ,, ,

գ. 11-րդ կետը լրացնել նոր ,,թ1,, , ,,թ2,, ենթակետերով հետևյալ բովանդակությամբ .

,,թ1) իրականացնում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար դիմումների ընդունման աշխատանքները.

թ2) իրականացնում է քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմած և չնշանակված քաղաքացիների ցանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում Խորհուրդ ներկայացնելու աշխատանքները. ,, .

5) անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-3.3-7) անձնագրի՝

ա. 11-րդ կետի ,,զ,, ենթակետից հանել ,,և կրտսեր,, բառերը.

բ. 11-րդ կետի ,,ը,, ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

,,ը) իրականացնում է Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման ավարտից մեկ ժամ հետո տեսանելի ցուցանակի վրա մրցույթի և ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի առկայության կամ բացակայության մասին տեղեկության հրապարակման աշխատանքները. ,, ,

գ. 11-րդ կետը լրացնել նոր ,,թ1,, ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

,,թ1) մասնակցում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար դիմումների ընդունման աշխատանքներին. ,, :

ՄԱՐԶՊԵՏ՝ Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 29

ք. Արտաշատ

«19» 04 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրանագրի 1.6.կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով մարզին հատկացված գումարից 450.0(Չորս հարյուր հիսուն) հազար դրամ գումար հատկացնել մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ որպես դրամական օգնություն / համաձայն հավելվածի/:
2. Հանձնարարել հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ կատարել համապատասխան վճարումներ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է.Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2011թ. ապրիլ«19»
N 29 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Արարատի մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվող դրամական օգնությունների

1. Շադյան Արկադի- 50.0 հազ. դրամ
2. Եդիգարյան Ալվարդ- 30.0 հազ. դրամ
3. Ներսիսյան Արեգնազան- 20.0 հազ. դրամ
4. Առաքելյան Ռիմա -15.0 հազ. դրամ
5. Խաչատրյան Գարիկ- 40.0 հազ. դրամ
6. Սիրանոսյան Սյուզաննա- 10.0 հազ. դրամ
7. Եղիազարյան Հայկազ-50.0 հազ. դրամ
8. Բաղդասարյան Հասմիկ-25.0 հազ. դրամ
9. Մնացականյան Ռիմա- 20.0 հազ. դրամ
10. Սահակյան Հռիփսիկ -20.0 հազ. դրամ
11. Խուդոյան Մառլեն -30.0 հազ. դրամ
12. Ասատրյան Ռայա-20.0 հազ. դրամ
13. Սարգսյան Զարուհի- 40.0 հազ. դրամ
14. Պողոսյան Նարինե - 20.0 հազ. դրամ
15. Դավթյան Շուշանիկ- 20.0 հազ. դրամ
16. Ղազարյան Համբարձում -10.0 հազ.դրամ
17. Առաքելյան Ժենիկ - 30.0 հազ.դրամ

Ընդամենը՝450.0 հազ. դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 28

«12» 04 2011թ.

ք. Արտաշատ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԵՎ 1984-1993 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի << Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.24 կետերով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի ապրիլի 7-ի << 2011թվականի գարնանային զորակոչը կազմակերպելու մասին>> թիվ 337-Ն որոշման 7-րդ կետի պահանջների՝

Որոշում եմ

1.Հաստատել Արարատի մարզի /ըստ տարածաշրջանների / տեղական զորակոչային հանձնաժողովների անհատական կազմերը՝ համաձայն թիվ 1, 2 և 3 հավելվածների:

2.Զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով առաջարկել Ոստիկանության Արարատի մարզային վարչությանը.

1/Կազմակերպել զորակոչից խուսափողների որոնում և ապահովել նրանց ներկայությունը զորակոչային տեղամասեր:

2/ Ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տարածքային տեղամասերում, զորակոչիկներին հանրապետական հավաքակայան փոխադրող

ավտոբուսներն ուղեկցելու համար տրամադրել ճանապարհային ոստիկանության անձնակազմեր:

3. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝ ապահովել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինկոմիսարիատ:

4.Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ ապահովել զորակոչիկների բժշկական հետազոտությունների անցկացումը:

5.Հանձարարել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնին՝ ապահովել զորակոչիկների փոխադրումը զինկոմիսարիատներից՝ հանրապետական հավաքակայան:

6.Արտաշատի, Արարատի և Մասիսի տարածքային զինվորական կոմիսարներին՝

1/Աշնանային զորակոչն անցկացնել սահմանված կարգով՝ համաձայն պլան – գրաֆիկի:

2/Ամենօրյա տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան՝ զորակոչի ընթացքի մասին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կատ.՝ Ա. Լալայան

Վ. Գրիգորյան

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզպետի
„12" „04" 2011թ. թիվ 83 որոշման

ԿԱԶՄ

Արտաշատի տարածքային զորակոչային հանձնաժողովի

Հ. Կարապետյան - Արտաշատի զինվորական կոմիսար /հանձնաժողովի նախագահ/
Ս. Կարապետյան - Արտաշատի ՆԳ բաժնի պետի տեղակալ
Ս. Հովհաննիսյան - Արտաշատի քաղաքապետարանի գլխավոր մասնագետ
Ա. Ղազարյան - ավագ բժիշկ, թերապևտ
Գ. Գրիգորյան - վիրաբույժ
Մ. Ավետիսյան - քիթ,կոկորդ,ականջաբան
Լ. Հախնազարյան - ակնաբույժ
Ն. Մինասյան - հոգեբույժ
Մ. Մնացականյան - նյարդաբան
Ռ. Սաֆարյան - մաշկավեներաբան
Ի. Հովհաննիսյան - ատամնաբույժ
Լ. Ավետիսյան - բուժքույր
Ի. Կարապետյան - հանձնաժողովի քարտուղար

Հավելված 2
ՀՀ Արարատի մարզպետի
„12" „04" 2011թ. թիվ 28 որոշման

ԿԱԶՄ

Արարատի տարածքային զորակոչային հանձնաժողովի

Գ. Դավիդյան - Արարատի զինվորական կոմիսար /հանձնաժողովի նախագահ/
Վ. Բաղալյան - Արարատի ՆԳ բաժնի պետի տեղակալ
Ա. Սարոյան - Վեդու քաղաքապետի տեղակալ
Վ. Ղուլյան - ավագ բժիշկ, վիրաբույժ
Ռ. Սահակյան - ակնաբույժ
Ա.Գրիգորյան - թերապևտ
Գ. Միրզոյան - հոգեբույժ
Գ. Միրզոյան - նյարդաբան
Գ. Ստեփանյան - քիթ,կոկորդ,ականջաբան
Ա. Սարգսյան - ատամնաբույժ
Պ. Պետրոսյան - մաշկավեներաբան
Հ.Վարդանյան - բուժքույր
Գ. Մարգարյան - հանձնաժողովի քարտուղար

Հավելված 3
ՀՀ Արարատի մարզպետի
„12" „04" 2011թ. թիվ 28 որոշման

ԿԱԶՄ

Մասիսի տարածքային զորակոչային հանձնաժողովի

Գ. Մանուկյան - Մասիսի զինվորական կոմիսար /հանձնաժողովի նախագա/

Զ. Թազայան - Մասիսի ՆԳ բաժնի պետի տեղակալ

Հ. Վարդանյան - Մասիսի քաղաքապետի տեղակալ

Յու. Հարությունյան - ավագ բժիշկ, վիրաբույժ

Ն. Հարությունյան - թերապևտ

Բ. Խաչատրյան - հոգեբույժ

Ս. Հովսեփյան - նյարդաբան

Ս. Նավասարդյան - քիթ, կոկորդ, ականջաբան

Լ. Սարգսյան - ակնաբույժ

Ս. Պողոսյան - մաշկավեներաբան

Ք. Մանթաշյան - ատամնաբույժ

Ա. Հարությունյան - բուժքույր

Ս. Ավետիսյան - հանձնաժողովի քարտուղար

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 27

ք. Արտաշատ

«08» 04 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով «ՀՀ Արարատի մարզի Մրգավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունը

«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի և Մասիսի տարածաշրջանների «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի հունիսի 30-ի N 68 որոշման 30-րդ տողում «Հարությունյան Սուսաննա» բառերը փոխարինել « Մինասյան Արմինե» բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 26

«06» 04 2011թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ԹԻՎ 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 1273-Ն որոշմամբ հաստատված << Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Արարատի ներմարզային՝ <<Վեդի-Գոռավան- Արարատ>> ավտոբուսային թիվ 02-016 երթուղում տրանսպորտային միջոցի փոփոխություն կատարելու մասին ՀՀ Արարատի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատկացնելու մրցութային հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 5-ի թիվ 4 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված
<< Արարատի մարզպետի
2011թ. ապրիլի 06
թիվ 26 որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

2011թ. ապրիլի 5-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի

Նիստի նախագահ Ա. Մուրադյան

Նիստի քարտուղար Ա. Հակոբյան

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանը, անդամներ Վ. Գրիգորյանը, Ս. Ղարիբյանը, Ա. Արամյանը, Ա. Դավթյանը:

Օրակարգ

<<Վեդի-Գոռավան-Արարատ>> թիվ 02-016 ավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինման մասին:

Լսեցին- <<Վեդի-Գոռավան-Արարատ>> թիվ 02-016 ավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինման մասին:

Զեկուցող- հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մուրադյան

Արտահայտվեցին-Ա. Հակոբյանը, Ա. Պողոսյանը, Վ. Գրիգորյանը

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N1273-Ն որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով, հիմք ընդունելով երթուղին սպասարկող <<ՎԵԴՈՒ ԲՈՒԱՏ>> ՍՊ ընկերության 2011 թվականի մարտի 24-ի N2 գրությունը՝

Որոշեցին

<<Վեդի-Գոռավան-Արարատ>> թիվ 02-016 ավտոբուսային երթուղին սպասարկողՊԱԶ-32053 մակնիշի 2302Լ պետհամարանիշի ավտոբուսը փոխարինել ՊԱԶ-672 մակնիշի 321ՍԼ26 պետհամարանիշի ավտոբուսով: /Կից մրցութային ամփոփ թերթիկ/:

Նախագահ	Ա Մուրադյան	/ստորագրություն/
Տեղակալ	Ա.Պողոսյան	/ստորագրություն/
Քարտուղար	Ա.Հակոբյան	/ստորագրություն/
Անդամներ	Վ.Գրիգորյան	/ստորագրություն/
	Ս.Ղարիբյան	/ստորագրություն/
	Ա.Արամյան	/ստորագրություն/
	Ա.Դավթյան	/ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 25

«01» «04» 2011թ.

ք. Արտաշատ

ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 62-3.1-16/ Լուսինե Ասատրյանին շնորհել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ